



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Յ.Յ.Դ. «ՉԱԼԱՐԵԱՆ» ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Երեքշաբթի, 18 Յունուարի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Յ.Յ.Դ. «Չալարեան» կոմիտեի անդամները (Լա Քրեսենթայի շրջան), գլխավորութեամբ կազմի ներկայացուցիչ Տիար Արիք Գեորգեանի. յարգելի հիւրերը Ազգ. Առաջնորդարան եկած էին ծանօթացումի եւ ամանորի ու Ս. Ծնունդի առիթով բարեմաղթութիւններ փոխանցելու Առաջնորդ Սրբազանին:

Հանդիպումին ներկայ եղան Ազգային Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան, փոխ ատենապետ Տիար Ճորճ Զօրպաճեան եւ գանձապահ Տիար Թորոս Բէչեճեան:

Խորհրդակցութեան նիւթ դարձան շրջանի հայութեան կարգ մը անմիջական հարցերն ու կարիքները, մասնաւորաբար երիտասարդութեան, աշակերտներու վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ Քրեսենթա Հովիտի ծխական համայնքի ծրագիրներն ու անոնց իրականացման միջոցները: Տիար Արիք Գեորգեան եւ ընկերակիցները ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին կոմիտեին տարած աշխատանքներուն մասին, վեր առնելով այն կալուածները, ուր գործակցութիւն կը տիրէ Առաջնորդարանին ու շրջանի ծխական համայնքին հետ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկաները, գնահատանքով արտայայտուեցաւ տարուող բազմաճիւղ աշխատանքներուն մասին, եւ ընդգծեց, որ իւրաքանչիւր միաւոր առանձինն չի կրնար այնքան արդիւնաւոր աշխատանք կատարել, որքան պիտի ընեն բոլորը՝ ձեռք ձեռքի տուած ու իրերօգնութեամբ:

Կարեւորութեամբ քննարկուեցան շրջանի հայ համայնքին հետ յարաբերութեանց սերտացման ու աշխատանքներուն մէջ մարդուժի ներգրաւման միջոցները:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանն ու հիւր ներկայացուցիչները ընդգծեցին գործակցութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը եւ հաղորդակցիւնները բաց պահելու կարեւորութիւնը:

ARF ZAVARIAN GOMIDEH MEMBERS VISIT THE PRELATE

On Tuesday, January 18th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed members of the ARF Zavarian Gomideh, who had come to convey their well wishes to the Prelate on the occasion of the New Year. The delegation was headed by Mr. Arik Kevorkian.

Executive Council Chair Mrs. Rima Boghossian, Vice-Chair Mr. George Chorbajian, and Treasurer Mr. Toros Kejejian participated in the meeting.

The Prelate, Council members, and guests, discussed issues concerning the Armenian community of Crescenta Valley as well as the progress of the Crescenta Valley parish. Mr. Kevorkian and guests conveyed information about the recent and future activities of the Zavarian Gomideh.

The Prelate commended the members for their service, and stressed the importance of collaborating to further strengthen relations with the community.

The visit concluded with the Prelate and guests affirming the need for continued collaboration and support between the Prelacy and the Gomideh for the advancement of the community.